Լիլյա ՎԱՐԴԱՆՅԱՆ, Համլետ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՇԻՐԱԿԻ՝ 1926-1927 Թ.Թ. ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

## (ԸՍՏ ՍՏ. ԼԻՍԻՑՅԱՆԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

Հայ ազգագրության և աշխարհագրության ականավոր գործիչ Ստեփան Լիսիցյանն իր բեղմնավոր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն է դարձրել ազգագրական նյութերի հավաքման ու գրառման գործին: Այս ուղղությամբ նա մեծածավալ աշխատանքներ է կատարել հատկապես 1920-30-ական թթ.:

Սկզբնական շրջանում Ստ. Լիսիցյանը կազմակերպել ու ղեկավարել է Հայաստանի գավառագիտության /1925-1923թթ./, ապա՝ ազգագրության /1928-1947թթ/, օջախները, միաժամանակ եղել է Թիֆլիսի Կովկասյան պատմահնագիտական ինստիտուտի աշխատակից:

Սահմանադրապես, 1925 թ. նրա ջանքերով սահմանվել է Լենինականի գավառագիտական ընկերությունը, որտեղ հաճախակի կազմակերպվել են գիտական դասախոսություններ ու քննարկումներ:

Վաստակաշատ գիտնականը քաջ գիտակցել է իր ապրած ժամանակաշրջանի յուրահատկությունը, երբ «խորհրդային կարգերի հաստատման տարիներին և մանափսնդ կոլխոզային շինարարության հետևանքով, ռեսպուբլիկայի բոլոր ազգությունների մեջ հին կենցաղը ենթարկվում է արմատական ձևափոխման... ամեն կողմերով տնցյալի հիշողությունները արագ մթագնվում էին, իսկ տնայնագործական իրերը գործածությունից հանվելով, պահպանվում են ողորմելի վիճակի մեջ, այս ու այն տեղ պատահաբար»[1]:

Նա կոչ էր անում «աչքից բաց չթողնել այն հանգամանքը, որ հին կենցաղային իրերն ու հին նիստուկացի մնացորդներն արագ անհետանում են, և այդ նյութերի հավաքումը տարեց-տարի դժվարանում է և գրեթե անհնարին է դառնում»[2]:

Անցյալի ազգային արժեքները կորստից փրկելու նպատակով 1930-ական թթ. Ստ. Լիսիցյանը ծրագրված գիտարշավներ է կազմակերպում Հայաստանի գավառներում: Այս գիտարշավներն ընդգրկեցին Զանգեզուրը, Լոռին, Գեղարքունիքը, Արագածոտնը, ինչպես նաև Ջավախքը: Հարուստ ու բազմաբնույթ /լուսանկարներ, ձեռագրեր, չափագրություններ և այլն/ նյութեր գրառելուց զատ, հայկական բնակավայրերից ձեռք է բերվում մեր ժողովրդի կենցաղին ու մշակույթին վերաբերող 1000-ից ավելի իր և տեղափոխվում Երևան: Հիմնականում ազգագրական, մասամբ հնագիտական և գեղարվեստական այդ նմուշները տեղ են գտնում նոր կազմավորվող սայր թանգարաններում:

Հայաստանի տարբեր գավառներում և հատկապես Երևանում, Ստ. Լիսիցյանն իր դաշտային գիտարշավների ժամանակ առանձնակի ուշադրություն էր դարձնում Մեծ Եղեռնից փրկված հայերի՝ Խորհրդային Հայաստանի ներգաղթի խնդրին և գաղթականության ուսումնասիրության գործը համարում էր «անհետաձգելի և շտապողական»[3]:

Հայրենադարձված մեր հայրենակիցներին տեղավորում էին Հայաստանի տարբեր գավառներում: Մեծ էր նրանց թիվը հատկապես Երևանում, որտեղ էլ ժամանակին հիմնվեցին Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա, Նոր Բութանիա, Նոր Սեբաստիա, Նոր Արեշ և այլ թաղամասեր: Արևմտահայ գաղթականության շրջանում ուսումնասիրություններ կատարելու նպատակով, Ստ. Լիսիցյանի կողմից մշակված ծրագրով գրանցվում էին նյութական ու հոգևոր մշակույթին վերաբերող նյութեր[4]: Նրա համոզմամբ, «քանի որ նախկին հայրենի գավառները դատարկված են հայերից, և այնտեղ վերաբնակվելու ոչ մի հեռանկար չկա, սա միակ ճանապարհն է, որով դեռ կարելի է գիտության համար

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 428, ց. 4, գ. 308, թ. 11:
2. Ստ.Լիսիցյան, Պատմական ակնարկ, ՀՊՊԹ, Ազգագրության բաժնի գրավոր աղբյուրների ֆոնդ, ց. 1, գ. 106, թ. 39:
3. ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 428, ց.4, գ. 308, թ. 12:
4. Ստ.Լիսիցյան, նշվ. աշխ., թ. 36:

մոռացությունից փրկել այդ վայրերի ազգագրական նյութերը և կենցաղային իրերը, գրանցել նաև ֆոլկլորն ու բարբառը, մինչև որ տեղափոխվածները չեն միաձուլվել վերջնականապես նոր էթնոգրաֆիկ միջավայրի հետ»[5]:

Բազմավաստակ գիտնականի հարուստ արխիվի անտիպ նյութերից առաջին անգամ շրջանառության մեջ է դրվում, մեր կարծիքով, եզակի ու արժեքավոր մի փաստաթուղթ, որը վերաբերում է Լենինականի գավառում /նշենք, որ փաստաթուղթը ընդգրկում է պարունակում նաև Դիլիջանի, Զանգեզուրի, Լոռի-Փամբակի գավառների մասին/ 1926-1927 թթ., ըստ բնակավայրերի, արևմտահայերի տեղաբաշխմանն ու քանակին:

Այս փաստաթուղթը ստացվել է Հայաստանի հողագործության ժողկոմատից՝ Լուսժողկոմատի կենտրոնական գավառագիտության բյուրոյի գիտքարտուղար-նախագահ Ստ. Լիսիցյանի պատվերով: Այն ունի «Ցուցակ Լենինականի գավառի[6] բնիկ տաճկահայերի» գլխագիրը, բաղկացած է ութ էջից և ունի հետևյալ բովանդակությունը: Ըստ գավառակների /դրանք յոթն էին/, աղյուսակի տեսքով, ներկայացված է.

ա) բնակավայրերի անվանումը (նախկին անվանումներով), որոնցում տեղավորվել են արևմտահայերը,

բ) շրջանը կամ բնակավայրը, որտեղից ծագում են գաղթականները,

գ) ծխերի թիվը,

դ) շնչերի թիվը:

Ցավոք, այս փաստաթղթում որոշ նյութեր թերի են ներկայացված. այսպես՝ Լենինականի հողժողկոմատի պատասխան գրության մեջ ասվում է.

«Հաղակից ուղարկելով Ձեր գրությամբ սահմանված ցուցակը, հայտնում ենք, որ 2-րդ, 4-րդ և 6-րդ գավառակների գյուղերի ծխերի թվերը ցույց չեն տված նրա համար, որ այդ գավառակներից ծխերի թվերի մասին չէր առացված տեղեկություն, իսկ հողբաժնում այդ տեղեկությունը չկար, որպեսզի հայտնենք»[7]:

Սակայն, այսուհանդերձ, քննության առարկա ցուցակները Լենինականի գավառի գաղթականության ուսումնասիրության արժեքավոր աղբյուր են:

Նշված նյութերի վերլուծությունից պարզվում է հետևյալը.

1. 1926 թ. վերջին Լենինականի յոթ գավառներում հաստատվել են ավելի քան 13,8 հզ. գաղթական, ըստ որում 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ գավառակներում տեղավորվել են 1584 ընտանիք (բնագրում՝ ծուխ), 7722 մարդ (բնագրում՝ շունչ). իսկ մնացյալ երեք գավառներում՝ 6088 մարդ, որից 323-ը՝ եզդի: Մեր հաշվարկներով, վերոգրյալ երեք գավառներում ընտանիքների մոտավոր թիվը հաշվվում էր գաղթականների 2834 ընտանիք: Այս պարագայում յուրաքանչյուր ընտանիքի անդամների միջին թիվը շուրջ 4,9 մարդ էր:

2. Ըստ ծագման, ներգաղթողները կամ հայրենադարձները ներկայացնում էին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր, որոնք ցուցակում ամփոփված են չորս տասնյակից ավելի վարչամիավորներում (նահանգ, գավառ, քաղաք, գյուղ):

3. Լենինականի գավառի 40 բնակավայրում տեղավորվեց ավելի քան 3,5 հզ. մշեցի, 37-ում՝ 1,5 հզ. բուլանըխցի, 40-ում՝ 1,1 հզ. կարսեցի, 31-ում՝ 3,4 հզ. բիթլիսցի, 28-ում՝ 828 էրզրումցի, 18-ում՝ 514 խնուսցի, 14-ում՝ 515 բասենցի, 16-ում՝ 503 ալաշկերտցի, որոնց գումարը կազմում է գավառի գաղթական ամբողջ բնակչության 86 տոկոսը:

4. Ցուցակում 7-րդ գավառակի (Արագածի նախկին շրջանի տարածք) 22 բնակավայրերից 12-ը քրդաբնակ էր, այստեղ տեղավորվեց գաղթականների 132 ընտանիք կամ 762 մարդ: Այս տվյալները համեմատելով 1926 և 1931 թթ. մարդահամարների արդյունքների հետ, պարզվեց, որ 1926 թ. նշված 12 բնակավայրում կար ընդամենը 270 հայ, իսկ 1931 թ.՝ 252 (քրդերի թիվը համապատասխանաբար՝ 5164 և 7074 մարդ): Մեր

*5. ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 428, ց. 4, գ. 308, թ. 12:*

*6. Լենինականի նախկին գավառի տարածքը գրեթե համընկնում է արդի Շիրակի մարզի տարածքին, բացառությամբ է կազմում թերևս Թալինի նախկին շրջանի հյուսիս-արևմտյան մասը և Արագածի շրջանը:*

*7. ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 428, ց. 1, գ. 328, թ. 8.*

կարծիքով, գաղթական հայ բնակչության միայն փոքր մասն է անդավորվել քրդաբնակ գյուղերում, այն էլ, ինչպես ցույց են տալիս մարդահամարների արդյունքները, շուտով լքել են դրանք ու հեռացել:

Այսպիսով, 1915 թ. Արևմտյան Հայաստանում Թուրքիայի կողմից հայ բնակչության զանգվածային կոտորածներից հրաշքով փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ. նրանց միայն փոքր մասը հանգրվանեց մեր հանրապետության տարածքում, այդ թվում, Լենինականի և նախկին գավառի տարածքում:

1921թ. հետո ներգաղթյալների թիվը զգալի աճեց, սկսվեց հայրենադարձությունը: Ներկա առարկա ցուցակում ամփոփված են գաղթականների կամ հայրենադարձների քանակական արժեքներն ու տեղաբաշխման վայրերը ընդհուպ մինչև 1927 թ. սկզբները: Սրանով էլ պայմանավորված՝ նպատակահարմար գտանք այն ամբողջությամբ, որպես հավելված, կցել հոդվածին՝ որոշ շտկումներ ու լրացումներ կատարելուց հետո (մասնավորապես, ուղղվել են բնակավայրերի անվանումները, ավելացվել է մարզերի կամ նախկին շրջանների սյունակը և տրվել թվային արժեքների ամփոփում):

*ՅԱՎԵԼՎԱԾ*

## ՑՈՒՑԱԿ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ ՏԵՂԱԲԱՇԽՎԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ (ԸՍՏ 1927 Թ. ՎԻՃԱԿԻ)

| NN | Գավառակ գյուղ | Մարզ | Գաղթականների ծագման վայրը | Ընտանիք | Մարդ |
|---|---|---|---|---|---|
| | I Գավառակ | | | | |
| 1 | Վահրամաբերդ | Շիրակ | Մանազկերտ | 10 | 74 |
| | (Ն. Ղանլիջա)[1] | (Ախուրյանի | Բուլանըխ | 7 | 52 |
| | | շրջան)[2] | Հասանղալա | 4 | 28 |
| | | | Մուշ | 2 | 15 |
| | | | Բայբուրդ | 1 | 1 |
| 2 | Հայկավան | | Մուշ | 69 | 305 |
| | (Բաջօղլի) | | Խնուս | 25 | 131 |
| | | | Բասեն | 13 | 69 |
| | | | Հունաստան | 6 | 21 |
| | | | Էրզրում | 2 | 12 |
| | | | Շապին Կարահիսար | 2 | 6 |
| | | | Բուլանըխ | 1 | 3 |
| | | | Վան | 1 | 4 |
| 3 | Կարմրաքար (Դարբանդ) | | Խնուս | 1 | 6 |
| 4 | Մեծ Սարիար | | Էրզրում | 11 | 71 |
| | | | Բասեն | 8 | 46 |
| | | | Բայբուրդ | 2 | 16 |
| | | | Խնուս | 2 | 8 |
| | | | Նարիման | 1 | 11 |
| 5 | Շիրակ | | Բասեն | 6 | 60 |
| | (Ղոնախղրան) | | Մանազկերտ | 6 | 34 |
| | | | Բուլանըխ | 6 | 21 |
| | | | Էրզրում | 4 | 22 |
| | | | Ալաշկերտ | 1 | 6 |
| | | | Մուշ | 1 | 6 |
| | | | Խլաթ | 1 | 4 |
| 6 | Հացիկ | Շիրակ | Բիթլիս | 3 | 9 |
| | (Թոփսաղի) | | Հասանղալա | 3 | 10 |
| 7 | Ղարիբջանյան | | Խնուս | 8 | 30 |
| | (Ալեքսանդրովկա) | | Բասեն | 7 | 36 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Բուլանըխ | 4 | 17 |
| | | | Մուշ | 3 | 12 |
| | | | Աքսիշեհիր | 1 | 7 |
| | | | Ալաշկերտ | 1 | 3 |
| 8 | Կապս | | Օլթի | 1 | 5 |
| 9 | Կառնուտ | | Մանազկերտ | 7 | 30 |
| | (Դիրաքլար) | | Բայբուրդ | 5 | 19 |
| | | | Կ. Պոլիս | 1 | 3 |
| 10 | Կրաշեն | | Էրզրում | 6 | 38 |
| | (Աղքիլիսա) | | Սանազկերա | 1 | 2 |
| 11 | Ոսկեհասկ | | Սուշ | 200 | 950 |
| | (Սոլյա-Մուսա) | | Խնոա | 36 | 185 |
| | | | Բուլանըխ | 6 | 21 |
| | | | Էրզրում | 5 | 44 |
| | | | Բիթլիս | 3 | 13 |
| | | | Ալաշկերտ | 1 | 3 |
| | | | Խարբերդ | | |
| 12 | Գեաք | | Մուշ | 9 | 37 |
| | (Դաեառլի) | | Բիթլիս | 5 | 13 |
| | | | Բասեն | 2 | 10 |
| | | | Յոզղադ | 1 | 6 |
| | | | Բուլանըխ | 1 | 3 |
| 13 | Խանվալի* | | Մուշ | 3 | 15 |
| 14 | Հովիտ | | Հասանղալա | 6 | 37 |
| | (Փ. Քյափանակ) | | Դերջան | 2 | 3 |
| | | | Բիթլիս | 1 | 15 |
| | | | Մանազկերտ | 1 | 2 |
| 15 | Եթազգավորս | | Մուշ | 99 | 369 |
| | (Արալըխ) | | Բուլանըխ | 2 | 12 |
| 16 | Առափի (Օջախղուլի) | | Բուլսանըխ | 2 | 6 |
| 17 | Մալիսրսն | Շիրակ | Սուշ | 15 | 74 |
| | (Օրթաքիլիսա) | | Երևինկա | 6 | 20 |
| | | | Ջառա | 3 | 12 |
| | | | Էրզրում | 2 | 6 |
| | | | Թոքատ | 1 | 4 |
| 18 | Կամո | — | Մուշ | 12 | 43 |
| | (Հաջի-Նազար) | | Բուլանըխ | 12 | 39 |
| | | | Բասեն | 7 | 31 |
| | | | Դերջան | 3 | 13 |
| | | | Բայբուրդ | 2 | 6 |
| | | | Խլաթ | 1 | 7 |
| | | | Բիթլիս | 1 | 3 |
| | | | Էրզրում | 1 | 3 |
| 19 | Մռաայեյան | — | Բասեն | 30 | 140 |
| | (Մ. Քյափանակ) | | Մուշ | 11 | 63 |
| | | | Կ. Պոլիս | 17 | 67 |
| | | | Լզար | 10 | 42 |
| 20 | Ջրառատ | — | Էրզյում | 51 | 256 |
| | (Չթախլի) | | Բուլանըխ | 20 | 108 |
| | | | Խնուս | 11 | 43 |
| | | | Մանազլերտ | 5 | 16 |
| | | | Բիթլիս | 3 | 7 |
| | | | Ալաշկերտ | 1 | 9 |
| | | | Օլթի | 1 | 4 |
| | | | Դերջան | 1 | 3 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 21 | Ախուրյան | — | Մուշ | 6 | 17 |
| | (Դուզքենդ) | | Դերջան | 5 | 9 |
| | | | Բուլանըխ | 4 | 16 |
| | | | Բիթլիս | 2 | 9 |
| | | | Մանազկերտ | 1 | 3 |
| 22 | Բայանդուր | — | Մուշ | 5 | 24 |
| 23 | Ազատան | — | Մուշ | 15 | 63 |
| | (Փ. Ղարաքիլիսա) | | Բուլանըխ | 10 | 50 |
| | | | Ալաշկերտ | 3 | 20 |
| | | | Բասեն | 2 | 9 |
| 24 | Հովունի | Շիրակ | Բիթլիս | 16 | 89 |
| | (Յասաուլ) | | Բայազետ | 3 | 19 |
| | | | Խնուս | 2 | 13 |
| | | | Վան | 1 | 3 |
| | | | Էրզրում | 1 | 10 |
| | | | Սվազ | 1 | 2 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | 933 | 4372 |
| | II ԳԱՎԱՌԱԿ | | | | |
| 1 | Սարալանջ | Շիրակ | Կարս | | 12 |
| | (Բաշգյուղ) | (Արթիկի շրջան) | Սարիղամիշ | | 6 |
| | | | Սանազկերա | | 4 |
| 2 | Արթիկ | | Բուլանըխ | | 15 |
| 3 | Մեծ Մանթաշ | | Բիթլիս | | 49 |
| | (Մեծ Արխվալի) | | Էրզրում | | 32 |
| | | | Կարս | | 29 |
| | | | Սանազկերտ | | 8 |
| | | | Սուրմալու | | 3 |
| 4 | Նոր Կյանք | | Խնուս | | 6 |
| | (Սաչլի) | | Բուլանըխ | | 5 |
| | | | Կարս | | 5 |
| | | | Սուրմալու | | 4 |
| | | | Էրզրում | | 4 |
| | | | Մուշ | | 3 |
| 5 | Մեղրաշեն (Ղազանչի) | | Սանազկերտ | | 16 |
| 6 | Արևշատ | | Բարսեն | | 13 |
| | (Եկանլար) | | Բուլանըխ | | 8 |
| | | | Կարս | | 8 |
| | | | Էրզրում | | 4 |
| 7 | Գեղանիստ | | Կարս | | 4 |
| | (Ղոլղաթ) | | Բուլանըխ | | 2 |
| 8 | Գեղադիր | Աբագածոտն | Քաքուլի | | 17 |
| | (Ներքին | (Արագածի շրջ.) | Բասեն | | 2 |
| | Գյոզալդարա) | | | | |
| 9 | Այգաբաց | Շիրակ | Կարս | | 18 |
| | (Իլխիարի) | (Ախուրյանի շրջ.) | Սանազկերտ | | 7 |
| | | | Վան | | 7 |
| | | | Սարիղամիշ | | 4 |
| | | | Էրզրում | | 4 |
| 10 | Փոքր Մանթաշ | (Արթիկի շրջան) | Բուլանըխ | | 23 |
| | (Փ. Արխվալի) | | | | |
| 11 | Վարդաքար | | Կարս | | 23 |
| | (Թոմարտաշ) | | Բուլանըխ | | 12 |
| | | | Բիթլիս | | 4 |
| 12 | Նորաշեն | | Կարս | | 25 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Յոնջալվա | | 15 |
| 13 | Սարսնդարյան | (Արթիկի շրջան) | Խլաթ | | 20 |
| | (Ղուլիջան) | | | | |
| 14 | Գետափի | | Կարս | | 3 |
| | (Ղամալի) | | | | |
| 15 | Անուշավան | | Բուլանըխ | | 11 |
| | (Փ. Պարնի) | | | | 11 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | 446 |
| | III ԳԱՎԱՌԱԿ | | | | |
| 1 | Աշոցք | Շիրակ | Մուշ | 8 | 37 |
| | (Ղուկասյան) | (Ղուկասյանի շրջ ) | Էրզրում | 5 | 26 |
| | | | Բայբուրդ | 2 | 8 |
| | | | Սամսոն | 2 | 9 |
| | | | Խարբերդ | 1 | 4 |
| | | | Ալաշկերտ | 1 | 3 |
| | | | Խնուս | 1 | 3 |
| 2 | Կրասար (Ղուրդդուլաղ) | | Բիթլիս | 18 | 94 |
| 3 | Սիզավետ (Քոռադբյուր) | | Ալաշկերտ | 2 | 5 |
| | | | Բուլանըխ | 2 | 4 |
| 4 | Սարագյուղ (Դարագյուղ) | | Էրզրում | 1 | 3 |
| 5 | Սարսւսրատ | Շիրակ | Մուշ | 2 | 11 |
| | (Սամոլի) | (Ղուկասյանի շրջ.) | Էրզրում | 1 | 6 |
| 6 | Արփենի | | Կարս | 2 | 10 |
| | (Փալութլի) | | Բայբուրդ | 1 | 3 |
| 7 | Փոքր Սարփար | | Մուշ | 2 | 10 |
| | | | Ալաշկերտ | 2 | 7 |
| | | | Օլթի | 1 | 2 |
| 8 | Թավշուտ | | Ալաշկերտ | 27 | 144 |
| | (Թազաքենդ) | | Բուլանըխ | 20 | 97 |
| | | | Մուշ | 2 | 8 |
| | | | Վան | 1 | 6 |
| | | | Թերճոն | 1 | 6 |
| | | | Բիթլիս | 1 | 4 |
| 9 | Ջրաձոր | (Ամասիայի շրջ.) | Օլթի | 1 | 2 |
| | (Ջարսր) | | Բուլանըխ | 1 | 11 |
| 10 | Մուսայելյան | (Ղուկասյանի շրջ.) | Բուլանըխ | 2 | 11 |
| | (Բոզյոխուշ) | | Մանազկերտ | 2 | 5 |
| | | | Հասանղալա | 1 | 1 |
| 11 | Վարդաղբյուր | | Բասեն | 13 | 76 |
| | (Գյուլլիբուլաղ) | | Կարս | 12 | 72 |
| | | | Բուլանըխ | 3 | 11 |
| 12 | Լեռնագյուղ | | Խորասան | 4 | 19 |
| | (Չոոլի) | | Մուշ | 1 | 5 |
| | | | Դալի-Պարա | 1 | 5 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | 147 | 728 |
| | IV Գավառակ | Շիրակ | | | |
| 1 | Ղուբնիդշլաղ* | (Անիի շրջ ) | Կարս | — | 21 |
| 2 | Ն. Ջրափի | | Մուշ | | 18 |
| | (Չըոփլի) | | Գավառ | | 11 |
| | | | Բասեն | | 3 |
| | | | Խնուս | | 9 |
| 3 | Ձորակապ | Շիրակ | Կարս | | 7 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | (Բողազքյասան) | (Անիի շրջ.) | | |
| 4 | Հառամ | (Արթիկի շրջ.) | Կարս — | 8 |
| 5 | Բաղրավան | (Անիի շրջ.) | Մուշ | 51 |
| | (Բուղդաշեն) | | Կարս | 91 |
| | | | Բիթլիս | 23 |
| | | | Խնուս | 15 |
| | | | Մանազկերտ | 14 |
| | | | Վան | 10 |
| | | | Ալաշկերտ | 3 |
| 6 | Ղոլխ* | | Ալաշկերտ | 46 |
| 7 | Տաշ-Ղալաչ* | | Մանազկերտ | 46 |
| | | | Խնուս | 27 |
| | | | Բուլանըխ | 10 |
| | | | Ալաշկերտ | 10 |
| | | | Վան | 5 |
| 8 | Վ. Ջրափի | | Մուշ | 73 |
| | (Ղեղաչ) | | Բիթլիս | 57 |
| | | | Բուլանըխ | 11 |
| 9 | Շիրակավան | | Կարս | 40 |
| | (Տավշանղշլաղ) | | Կ. Պոլիս | 10 |
| 10 | Սարալիկ | | Կարս | 67 |
| | (Մոլլա Գ-յոքչա) | | Մուշ | 22 |
| | | | Բուլանըխ | 21 |
| | | | Վան | 17 |
| | | | Մանազկերտ | 4 |
| | | | Խնուս | 2 |
| 11 | Լուսակերտ | (Արթիկի շրջ.) | Մուշ | 3 |
| | (Թալիբօղլի) | | Կարս | 3 |
| 12 | Գառնառավիտ | Արագածոտն | Մուշ | 18 |
| | (Աղիաման) | (Թալինի շրջ.) | Կարս | 11 |
| | | | Խնուս | 5 |
| | | | Էրզրում | 6. |
| | | | Մանազկերտ | 2 |
| 13 | Տուֆաշեն | Շիրակ | Բիթլիս | 12 |
| | (Արմթլու) | (Արթիկի շրջ.) | Կարս | 6 |
| 14 | Սառնաղբյուր | (Անիի շրջ.) | Խնուս | 7 |
| | (Սոգյութլի) | | Մանազկերտ | 5 |
| 15 | Լանջիկ | | Կարս | 3 |
| | (Մոլլամուսա) | | Ալաշկերտ | 37 |
| | | | Մուշ | 34 |
| | | | Բիթլիս | 19 |
| | | | Կարս | 7 |
| 16 | Լեռնակերտ | (Արթիկի շրջ.) | Մանազկերտ | 9 |
| | (Շիրվանջուղ) | | | |
| 17 | Սարատակ | | Կարս | 10 |
| | (Իմրխան) | | Մուշ | 3 |
| 18 | Ցամաքասար | Արագածոտն | Մուշ | 258 |
| | (Սուսուզ) | (Թալինի շրջ.) | | |
| 19 | Սուսեր | — | Մուշ | 172 |
| | (Ղլիճաթաղ) | | Բիթլիս | 5 |
| | | | Էրզրում | 4 |
| | | | Մանազկերտ | 2 |
| | | | Խնուս | 2 |
| 20 | Գուսանագյուղ | Շիրակ | Մուշ | 84 |
| | (Ղափլի) | (Անիի շրջ.) | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 21 | Իսահակյան (Ղազարապատ) | — | Մուշ | | 7 | |
| | | | Իրան | | 4 | |
| | | | Կարս | | 2 | |
| | | | Մանազկերտ | | 2 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | 1494 | |
| | **V գավառակ** | | | | | |
| 1 | Ամասիա | Շիրակ | Սվազ | 4 | 26 | |
| | | | Ալաշկերտ | 1 | 6 | |
| | | | Էրզրում | 1 | 4 | |
| | | | Սվազ | 26 | 148 | |
| 2 | Ջարիշատ (Ղոնջալի) | (Ամասիայի շրջ.) | | | | |
| 3 | Կախմուտ (Չախմախ) | | | Բուլանըխ | 24 | 133 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | 72 | 317 | |
| | **VI գավառակ** | | | | | |
| 1 | Վ. Սասնաշեն (Վ. Ղարադայմազ) | Արագածոտն (Թալինի շրջ.) | Սասուն<br>Մուշ | | 221 | |
| 2 | Ն. Սասնաշեն (Ն. Ղարադայմազ) | — | Բիթլիս | | 365 | |
| 3 | Դավթաշեն (Այնալիճ) | — | Բիթլիս | | 250 | |
| 4 | Դաշտադեմ (Ն. Թալին) | — | Բիթլիս | | 260 | |
| 5 | Հացաշեն (Սարունջի) | — | Բիթլիս | | 323 | |
| 6 | Աշնակ | — | Բիթլիս | | 614 | |
| 7 | Թալին (Վ. Թալին) | — | Բիթլիս | | 93 | |
| | | | Սվազ | | 25 | |
| | | | Էրզրում | | 11 | |
| | | | Վան | | 10 | |
| 8 | Բնագրում ։կա | — | — | | — | |
| 9 | Եղնիկ (Դադալու) | -- | Ալաշկերտ | | 10 | |
| 10 | Արայդ* | — | Ալաշկերտ | | 156 | |
| 11 | Իրինդ | — | Մուշ | | 273 | |
| 12 | Ծաղկասար (Փիրթիքան) | — | Մուշ | | 130 | |
| 13 | Շղարշիկ (Շղաչի) | — | Բիթլիս | | 209 | |
| 14 | Կաքնաղբյուր (Մեհրիքան) | — | Ալաշկերտ | | 11 | |
| | | | Բիթլիս | | 470 | |
| 15 | Սասարա | — | Էրզրում | | 250 | |
| | | | Կ. Պոլիս | | 7 | |
| 16 | Զովասար (Ահաջի) | — | Բիթլիս | | 415 | |
| 17 | Կարմրաշեն (Ղրմզլու) | — | Բիթլիս | | 45 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | | 4148 | |
| | **VII գավառակ** | | | | | |
| 1 | Սիփան (Քըդի Փամբ) | Արագածոտն (Արագածի շրջ.) | Կարս | 11 | 62 | |
| | | | Սուրմալու | 10 | 45 | |
| | | | Կարս | 17 | 105 | |
| 2 | Հայրենյաց | Շիրակ | Սուրմալու | 3 | 19 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | (Սոնգյուտլու) | (Արթիկի շրջ.) | Վան | 2 | 25 |
| | | | Բայազեթ | 1 | 7 |
| 3 | Նիգավան | Արագածոտն | Բուլանըխ | 10 | 50 |
| | (Դանագիրմազ) | (Ապարանի շրջ.) | Սանազկերտ | 2 | 8 |
| 4 | Շենկանի | — | Կարս | 6 | 49 |
| | (Քոռբուլաղ) | (Արագածի շրջ.) | Սուրմալու | 2 | 13 |
| 5 | Դերեկ | — | Վան | 8 | 41 |
| | (Ջառջառիս) | | Կարս | 8 | 36 |
| | | | Բուլանըխ | 4 | 26 |
| | | | Սանազկերտ | 3 | 20 |
| | | | Բիթլիս | 2 | 19 |
| | | | Այնթապ | 1 | 4 |
| 6 | Բերքառատ | — | Բիթլիս | 35 | 165 |
| | (Ախուլա) | | Կարս | 15 | 55 |
| | | | Էրզրում | 2 | 14 |
| | | | Կաղզվան | 2 | 11 |
| | | | Դերջան | 1 | 5 |
| | | | Մուշ | 1 | 5 |
| | | | Բասեն | 1 | 3 |
| | | | Վան | 1 | 3 |
| 7 | Հնաբերդ | — | Մուշ | 13 | 52 |
| | (Ղոխդագիրման) | | Կարս | 6 | 24 |
| | | | Մանազկերտ | 2 | 9 |
| | | | Բուլանըխ | 1 | 8 |
| | | | Բիթլիս | 1 | 8 |
| 8 | Բարոժ | — | Սուրմալու | 2 | 8 |
| | (Դուզքենդ) | (Թալինի շրջ.) | Մանազկերտ | 2 | 18 |
| | | | Վան | 1 | 7 |
| | | | Կարս | 1 | 8 |
| 9 | Գեղաձոր | (Արագածի շրջ.) | Բուլանըխ | 3 | 12 |
| | (Քեշիշքենդ) | | Կարս | 2 | 11 |
| | | | Մանազկերտ | 1 | 8 |
| 10 | Ծաղկահովիտ | — | Բուլանըխ | 9 | 42 |
| | (Հաջի-Խալիլ) | | Մուշ | 7 | 30 |
| | | | Սպարգետ | 4 | 19 |
| | | | Շեյխ-Աղար | 4 | 16 |
| | | | Բասեն | 3 | 17 |
| | | | Սանազկերտ | 1 | 6 |
| | | | Կարս | 1 | 4 |
| 11 | Օրթաճյա | — | Սուրմալու | 1 | 8 |
| | (Ղուռուբողազ) | | | | |
| 12 | Մելիքգյուղ | — | Վան | 3 | 10 |
| | (Մելիքքենդ) | | Բուլանըխ | 3 | 9 |
| | | | Կարս | 1 | 4 |
| | | | Բայբուրդ | 1 | 4 |
| 13 | Ռյա-Թազա | — | Վան | 2 | 8 |
| | (Ղոնդալաղ) | | | | |
| 14 | Սիրաք | | Ալաշկերտ | 3 | 21 |
| 15 | Ծիլքար | — | Կարս | 2 | 13 |
| | (Մունջուղլի) | | Սանազկերտ | 2 | 11 |
| | | | Խնուս | 1 | 4 |
| | | | Բուլանըխ | 1 | 4 |
| | | | Բիթլիս | 1 | 1 |
| 16 | Ամրե Թազա | Արագածոտն | Կարս | 8 | 37 |
| | (Քարվանսարա) | (Արագածի շրջ.) | Վան | 3 | 17 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Ավշեն (Չոքանկամազ) | — | Վան | 3 | 13 |
| | | | Բիթլիս | 1 | 9 |
| | | | Կարս | 1 | 5 |
| | | | Մանազկերտ | 1 | 4 |
| | | | Մուշ | 1 | 4 |
| 18 | Վարդաբլուր (Ջանգի) | Արագածոտն (Արագածի շրջ.) | Կարս | 14 | 54 |
| | | | Խնուս | 5 | 24 |
| | | | Մանազկերտ | 5 | 35 |
| | | | Բուլանըխ | 8 | 30 |
| | | | Բիթլիս | 3 | 17 |
| | | | Բաքնոց | 1 | 4 |
| | | | Ալաշկերտ | 1 | 6 |
| 19 | Լեռնապար (Հայի Փամբ) | — | Բիթլիս | 8 | 35 |
| | | | Վան | 2 | 2 |
| | | | Բուլանըխ | 1 | 6 |
| | | | Մուշ | 1 | 5 |
| | | | Քաքառլու | 1 | 2 |
| 20 | Գեղաձոր (Վերին Գյոզալդարա) | — | Բուլանըխ | 100 | 636 |
| | | | Մանազկերտ | 6 | 40 |
| | | | Էրզրում | 1 | 2 |
| 21 | Ալագյազ | — | Կարս | 7 | 36 |
| | | | Սուրմալու | 5 | 16 |
| 22 | Ջամշլու (Փոքր Ջամշլու) | — | Կարս | 12 | 78 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | 432 | 2305(2311) |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ I, III, V, VII գավառակներում | | | 1584 | 7722 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ II, IV, VI գավառակներում | | | — | 6088 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ ԳԱՎԱՌՈՒՄ | | | — | 13810 |

*Ծանոթություն.*
*1. Բնակավայրի նախկին անվանումը*
*2. Նախկին վարչատարածքային միավորը*
*3. Եզդիներ*
** Լքված բնակավայրեր*

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗМЕЩЕНИЯ БЕЖЕНЦЕВ В ШИРАКЕ В1926-1927Г.Г.(ПО МАТЕРИАЛАМ АРХИВА С.ЛИСИЦЯНА)


**Резюме** *Л.Варданян, Г.Саркисян*

В архиве С. Лисицяна сохранился документ из восьми страниц, озаглавленный ,,Список беженцев из Западной Армении Ленинаканского уезда,,. Документ был подготовлен в Наркомате земледелия по заказу научного секретаря центрального бюро краеведения Наркомпроса С.Лисицяна. В документе есть данные также о размещении беженцев в Дилижанском, Зангезурском и Лори-Памбакском уездах. В форме таблиц представлены названия населённых пунктов, где разместились беженцы, названия населенных пунктов Западной Армении, откуда были переселены, количество семей, число людей. В конце 1926 года в сорока населённых пунктах Ленинаканского уезда проживали 2834 семей беженцев: более 13800 душ. После геноцида 1915г. только малая часть беженцев обосновалась в Восточной Армении, в том числе - в Ленинаканском уезде. После 1921г., вследствие репатриации их число значительно увеличивается.